ՇԱԲԱԹՎԱ ԱՆՅՈՒԴԱՐՁ

ՊԱՏԵՐԱԶՄ

Ցերեւս առաջին անգամ շաբաթը բացարձակ հանգիստ էր. այդ ընթացքում ադրբեջանական բանակային ստորաբաժանումները ոչ մի անգամ չեն գնդակոծել Հայաստանի կամ ԼՂՀ–ի տարածքը: Այդուհանդերձ Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի Գլխավոր շտաբի պետի տեղակալ, գեներալ–մայոր Անատոլի Ջինեւիչը, բնութագրելով ընթացիկ իրավիճակը, հայտարարեց, որ խաղաղությունը ԼՂՀ–ում թվացյալ է: Հակամարտության գոտում իրապես շարունակվում է լավ զինված եւ մարտունակ երկու ճամբարների առճակատումը, որոնք ռազմական գործողությունների չեն դիմում միայն իրենց ղեկավարների կամքով, սակայն անցկացնում են ամենօրյա մարտավարական զորավարժանքներ, լուծում ռազմական խնդիրներ, մարզվում եւ այլն: Այս անորոշ վիճակը կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ կողմերը չեն պայմանավորվել որոշակի եւ համընդհանուր կարգավորման շուրջ: Ղարաբաղցի զինվորականի կարծիքով, կարգավորման գործում վճռական դերը խաղում է հատկապես Ռուսաստանը, որը տվյալ տարածաշրջանում ունի իր հազարամյա ավանդույթները:

Ա.Ջինեւիչը հայտարարել է, որ ղարաբաղցի հայերը արդեն երբեք չեն համաձայնի ապրել Ադրբեջանի խնամակալության ներքո եւ հարցի լուծման հիմքում պետք է ընկած լինի ԼՂՀ–ում ապրող բնակչության ցանկությունը:

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Հունգարիայի մայրաքաղաքում աշխատանքն սկսեց ԵԱՀԽ դիտորդական համատանքն սկսեց ԵԱՀԽ դիտորդական համատանքն սկսեց ԵԱՀԽ դիտորդական անձնակազմը, որին, այդ կազմակերպության անդամներից բացի, մասնակցում են նաեւ ՄԱԿ–ի, Եվրամիության, ՆԱՏՕ–ի, ԱՊՀ երկրների, Մերձբալթիկայի եւ Միջերկրական ավազանի երկրների ներկայացուցիչները: Հայ մասնագետները նշում են, որ այս անգամ Բուդապեշտում անհասկանալի պատճառներով բացակայում էր Ադրբեջանի պատվիրակությունը: Հետաքրքրական է, որ լիագումար առաջին նիստում նախագահում էին Հունգարիայի ներկայացուցիչը եւ Հայաստանի պատվիրակության ղեկավար, Ավստրիայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արման Նավասարդյանը: Անկախ դիտորդները գտնում են, որ հազիվ թե դա ՀՀ–ի նկատմամբ մեծ հարգանքի եւ կամ հայրենական դիվանագիտության արժանիքների գնահատման վկայություն է, ավելի շատ Արեւմուտքին անհրաժեշտ է ցանկացած միջոցով Հայաստանի իշխանություններին հավատացնել, թե իր վերաբերմունքը մեր երկրի խնդիրների նկատմամբ սկսել է հիմնովին փոխվել: Բնականաբար, նիստի մասնակիցների ուշադրության կենտրոնում էր նաեւ ԼՂՀ կարգավորման հարցը: Այդ կապակցությամբ քննարկվեցին Ռուսաստանի հետ ԵԱՀԽ փոխգործողության հարցերը եւ գործընթացում Մինսկի խմբի դերը: Օտարերկրյա դիվանագետները պնդում էին քննարկել հակամարտության գոտում ԵԱՀԽ հովանու ներքո տարանջատիչ միջազգային ուժեր տեղաբաշխելու հարցը, որն առաջացրեց Ռուսաստանի ներկայացուցիչների միանշանակ բացասական արձագանքը: Այնուամենայնիվ ԱՄՆ–ի պատվիրակությունը հրապարակեց իր երկրի վարչակազմի հայտարարությունը, որով Վաշինգտոնը պատրաստակամություն է հայտնում ստանձնել խաղաղարար ուժերը պահելու ծախսերի 1/4 մասը, այսինքն՝ 7 մլն. դոլար: Ասենք, որ 2000 զինվորների 6 ամսյա ծախսը (հակամարտության գոտում նրանց մնալու նախնական ժամկետը այդքան է) անցնում է 30 մլն. դոլարից: Չնայած ԵԱՀԽ Բուդապեշտի համաժողովը կշարունակվի մինչեւ դեկտեմբերի 5–6–ը, երբ այդտեղ կսկսվի այդ կազմակերպության ասամբլեան, արդեն այժմ պարզ է, որ ՌԴ եւ Արեւմտյան պետությունների դիրքորոշումները այս հարցում գնալով հեռանում են: Եվ բացառված չէ, որ ի վերջո ԼՂՀ կարգավիճակի մասին հարցը ավելի բարձր ատյանի՝ ՄԱԿ–ի ձեռքն անցնի: